

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մայն աշխատանքն արտոճաբերված է «Մտերմագործակցան ձանաթնէր
Օչ առնորային իրազատուցարն 3.0» արտոճագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported License. <https://creativecommons.org/licenses/by-nc/3.0/>

Դու հարող էս.

Կրտսթ.ճի ն ստորակէ ն/գր ջոն յոյնսն ճնոյնի որ հան ճի/ի որ
ճնոյնի նն հան ոյ/արդակէ որ ճնոյն որ ստղոյն ու ճոնոր ճոյն

You also like to:

Ճնոյն - <https://www.creativecommons.org/licenses/by-nc/3.0/>

Ճնոյն - <https://creativecommons.org/licenses/by-nc/3.0/>







281.6

ՄԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ

Մ Ե Ռ Ռ Ն Ե Փ Ե Ք

(ՆՎԵՐ ՀԱՅ ՈՒՍՏԱՎՈՐՆԵՐԻՆ)

36265

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՓԻ Ի-ԻՆ ՏՊԱՐԱՆ

Դրան 396 ր.

Պատվ. 5159

Տիրաժ — 5000

Մ Ե Ռ Ո Ն Ե Փ Ե Ք

(ՆՎԵՐ ՀԱՅ ՈՒՍՏԱՎՈՐՆԵՐԻՆ)

Քրիստոնեյական ընդհանուր յեկեղեցու, մասնավորապես Հայոց յեկեղեցու մեջ մեռոնը Սաշին և նույնիսկ Քրիստոսին հավասար սրբություն և ճանաչվում և այդ յեփվող սրբությունը պատրաստվում և շրացուցիչ ու շմեցուցիչ հանդիսավորությամբ, կրոնական մեծ ներկայացումով:

Հայ աստվածաբանները «սրբալույս մեռոնի» սրբարար նշանակությունը բացատրում և փառաբանում են հետևյալ և նման ճառերով.

«Քրիստոնեյական պաշտամունքի հետ կապ ունեցող ամեն մի իր և անձն այն ժամանակ և միայն սրբազան բնավորություն ստանում նրա աչքում, յերբ Ս. Մեռոնի դրոշմ կա վրան».

«Սրբալույս Մեռոնն և աստվածային սրբությամբ մաքրում մեր մեղսամած մարմինները և ճանապարհ բանում մեր հոգու առաջ դեպի յերկնային լուսո հավիտենական կայանները».

«Ս. Լուսավորչից սերնդե սերունդ ժառանգած որհնությամբ՝ յեփվող մեռոնի կնիքն և, վոր մկրտության ավազանից ի վեր վորոշում և յուրաքանչյուր հայ անձի կոչումը մարդկության մեջ... (կ. յեպ. «Ս. Մյուռոնի որհնությունը» 1912 թ.):

«Ինչպես վոր մարմնավոր այգիներն ու պարտեզներն ինչ վոր ունին և առաջ են բերում՝ ջրով վոռոգվելուց և, այնպես ել բոլոր յեկեղեցիներն՝ ինչ վոր ունին և առաջացնում են՝ Ս. Մյուռոնի վոռոգման շնորհիվ և, վոր Ս. Եջմիածնից և բղխում»:

«Ո՛վ ամենայն յեկեղեցիք և յեկեղեցականներ, ճանաչեցեք թագուհիների միակ թագուհի Ս. Եջմիածինը, վոր Հայոց ազգի աթոռն և և Քրիստոսի հատուկ սիրե-



լին: վորի նմանն ուրիշ ազգերը չունին, վորին յերանի
յեն աալիս և գովում, վորին կարոտում են և տեսնել
ցանկանում... Տեսեք և ճանաչեցեք կենդանի ջրո միակ
աղբյուր և ջրհոր Ս. Եջմիածինը, վոր ահա բաշխում է
ձեզ, հոռոգումն հոգևոր, կենդանարար ջուրը՝ Սուրբ
Մյուռոնը: Այն խորհրդավոր արեգակն է և Եջմիածինը,
վոր առատապես ճառագայթում է դեպի ձեզ աստվածա-
լին լույսը՝ Սուրբ Մյուռոնը, վոր ձեր հոգին ու մարմինը
պիտի լուսավորե: Վայելեցեք ուրեմն, շնորհակալ յեղեք
և իմացեք թե ումնից եք ստանում այդ շնորհը» (Միմեոն
կաթուղիկոս):

Զգիտես թե այս 3—4 անգամ մեռնոված աստվա-
ծաբանների աճաբարարությունները վողբաս, թե հայ
միամիտ հավատացյալների խորին տգիտությունը, վոր
այնքան թանգ գնով է ձեռք բերում մեռոնը «իբ հոգին
ու մարմինը լուսավորելու համար» մնալով միշտ խավար
հոգով ու մարմնով:

Բայց այստեղ ընդհատենք մեռոնի տված շնորհքի
չափն ու տեսակը և համառոտակի նկարագրենք մեռոնի
ծագումն ու զարգացումը:

«Մեռոն» խոսքը հունարեն է. այդ անունով եր կոչ-
վում ընդհանրապես բույսերից հոսող հյութը և հատկա-
պես ձիթապտղի յուղն անուշահոտ համեմունքներով
խառնված:

Շատ հնուց հրեաները, հույները և հռոմայեցիները
ձիթապտղի յուղը գործ են դրել վորպես մարմնի
կաշին փափուկ պահելու և արևից պաշտպանելու միջոց,
ճիշտ այնպես, ինչպես մեր ժամանակի կանայք, դեմքե-
րի և ձեռքերի կաշին փափուկ պահելու, դովություն
տալու և անուշ բուրմունք հոտոտելու և տալու նպատա-
կով, գործ են դնում գլիցերին, զանազան «կրեմներ»
ո-ղը-կոլոն, վարդաջուր և այլն: Ուրեմն անուշահոտ յու-
ղերով ոծվելու սովորությունն առողջապահական և դու-
րեկանության ծագումն ունի և մեծ մասով գործ էյին
դնում լվացումից հետո հյուր գնալիս, հյուր ընդունելիս

հանդիսավոր որերին: Իսկ սուգի որերում ոժոււմից հրա-
ժարվում էյին:

Քրիստոսի ժամանակ հրեաների մեջ մի սովորու-
թյուն ել կար, սրտամերձ հյուրին հյուրընկալը ոժում եր
յուղով, իսկ ամենաթանկագին հյուրին՝ նրա վտաները
վանալուց հետո, վտաներն էյին ոժում, վորպես արտա-
կարգ հարգանքի և սիրո նշան:

Հարուստների տներում ձիթապտղի պարզ ձեթի փո-
խարեն ոժման համար գործ էյին դնում զանազան համե-
մունքներով ու խնկեղեններով խառնած յուղեր, ամե-
նաթանկագինը նարգոսի յուղն եր համարվում:

Այսպիսով անուշահոտ յուղն իր սկզբնական՝ առող-
ջապահական նշանակություն ունեցող փուլից մտնում է
հարգանքի նշանակություն ունեցող փուլը, իսկ այս
փուլից մինչև կրոնական պաշտամունքի փուլը մի քայլ
եր միայն:

Հրեական ճարպիկ հոգևորականները կրոնական գույն
տվին ոժմանը և սկսեցին ոժել կրոնական իրերը՝ վկայու-
թյան խորանը, սեղանը, կահավորությունը և այլն: Յեւ
յուղի ոժումով այդ իրերը դարձան նվիրական, պաշտելի:

Իրերը նվիրական, սուրբ դարձնող հոգևոր կաստան
չեր կարող իրեն մոռանալ. նա ել սկսեց կրոնական
հանդիսավորութչամբ ոժվել և նվիրական դառնալ վորպես
սրբազնագործ պաշտոնյա, աստծուն մոտիկ կանգնած,
նրա կամքը հասկացող ու հավատացյալներին թելադրող
մի միջնորդ աստծու և հավատացյալների մեջ, վորոնցից
նա ջնկվեց իր դիրքով և հարգական ու պաշտելի դար-
ձավ Աստծու կողքին: Հոգևոր կաստան այս դիրքն ամ-
րացնելուց հետո՝ ոժման շնորհիվ ապահովեց իր անաշ-
խատ ու ճոխ ապրուստը հավատացյալներին հաշվին, հա-
սարակական դատապարտող կարծիքից վեր մնաց և այ-
նուհետև իր շարագործ արարքների և շահագործութչան
համար անարգելք ազատություն շահեց:

Թագավորներն իհարկե չէյին կարող անտարբեր
մնալ, յերբ տեսան թե հոգևոր դասը ոժման շնորհիվ

նվիրական դարձավ, աստվածային գույն առավ ժողովրդի աչքում և հզոր ազդեցութիւնն ձեռք բերեց, մինչդեռ իրենք սոսկ մարդ մնացին, նրանք եւ սկսեցին ոծվել և իրենց քաղաքական ուժին միացրին նաև կրօնական-աստվածային գորութիւնը: Այսպիսով ոծման շնորհիվ այդ յերկու դասակարգը՝ արքայականը և կրօնականը, նվիրականութեան, սրբազնութեան բնույթ ստացան, տեր ու տնօրեն դառնալով մարդկանց հոգիների, մարմինների և աշխատանքի վրա:

Յեւ այս ոծումները վերացական, խորհրդավոր մեկնութիւններ ստացան թե՛ համեմատած ձիթի ոծումով և նրա շուրջը շարադրված աղոթքների և կրօնական հանդեսների շնորհիվ ոծյալը փոխվում է, աստվածային շնորհ է իջնում նրա վրա, ինչպես և իրերի վրա. նրանք աստվածանում են և սովորական մահկանացուների համար դառնում են յերկրպագելի, պաշտամունքի առարկա և հավատացյալներից անպայման հնազանդութիւնն պահանջելու իրավատեր:

Իսկ թե վորքան նյութական զրկանք, հոգիների և մարմինների բռնութիւն, հետամնացութիւնն ու տղիտութիւնն է շահել հավատացյալ մասսան այս ձիթաշնորհ ոծյալներից, այդ միայն յերևակայել կարող է ընթացողը հրեյական աստվածաշունչը և պատմութիւնը կարդալով:

Ձիթով կամ համեմատած յուղերով ոծվելու այս եվոլյուցիայի մանրամասն պատմութիւնը հետաքրքրվողը կարող է քաղել Աստվածաշնչի և Ավետարանի հետևյալ գլուխներից՝ «Հռութ» գլուխ 3, «Սաղմոս» գլ. 22, «Ամովս» գլ. 6 «Բ. Թագավորաց» գլ. 14, 12. «Մարկոս» 14. «Հով.» 12, «Յելից» 30, «Յեսայի» 39, «Գ. Թագավորաց» 10, «Յեզր» 27, «Յերգ յերգոց» 1. Մարկ. 14. «Յելից» 40, «Ա. Թարգ. 10, 16:

Այսպես եր մինչև Քրիստոսի ժամանակը:

Հոգևոր ու մարմնավոր ոծյալների շահատակու-

թյանց շնորհիվ, հրեա ժողովուրդը սոսկալիորեն քայ-
քայվեց և՛ քաղաքականապես և՛ տնտեսապես:

Իրենց ազգն ու հայրենիքը ոճյալների վերջնական
կործանումից ազատելու հուր ցանկությամբ առաջ յե-
կան հեռատես ժողովրդասեր անձեր, վորոնք կոչվեցան
կանխատես մարգարեներ, և բողոքեցին ոճյալների ու-
րենքների, բարքերի և իրավակարգի դեմ, նոր իրավա-
կարգի պահանջը շեշտեցին և պահանջեցին նեղսիրտ,
վատասերող կրոնի մեջ բարոյական, մարդասեր գաղա-
փարներ մտցնել. նրանք Մեսսիայի՝ ոճյալներից աշխար-
հը փրկողի ակնկալությունը տվին և դադաված ժողովրդի
աչքը գալիք Մեսսիայի վրա դարձրին:

Մեսսիային ակնկալողները նրան յերևակայում եին
գարձյալ իբրև քահանայապետ, իբրև թագավոր (ուրիշ-
կերպ չեյին ել կարող յերևակայել) ուստի և Հիսուսին ել
Քրիստոս (ոճյալ) անունը տվին. բայց մի ոճյալ, վոր
ձիթով ու ձկներով չեր ոճվելու, վորի շնորհքը ձիթից
չեր բղխելու, այլ իր շնորհքն իր մեջը պիտի լիներ,
նա ոճված եր հայր Աստծու հոգով և յուղի ոճման կա-
րոտ չեր:

Նա ձիթով ոճվողների դասակարգերիցը չեր գալու,
վորոնց մեջ փրկություն չկար, այլ պիտի գար աղքատ-
ների դասակարգից, արհեստավորի տնից, վորտեղից
միայն կարելի եր թշվառացած մասսայի փրկությունը
հուսալ:

Յեկավ նա (ըստ Ավետարանի) վոչ հոգեվոր և վոչ
աշխարհիկ ոճյալների միջից. յեկավ տանջվածների զանգ-
վածից և ոճյալների դեմ սկսեց իր բողոքն ու պայքարը:

Նա վոչ քահանա եր և վոչ թագավոր՝ սովորական
իմաստով, այլ մի աշխարհական և վոչ մի ոճումն չըն-
դունեց. նա դեմ եր ոճումներին, շատախոս աղոթքներին,
նույնիսկ տաճարին ու տաճարականության, խղճմտանքի
վրա բռնացող շինծու որենքներին, ոճյալների շահագոր-
ծությանը, ստին, կեղծիքին, դասակարգայնությանը,
անձնական սեփականությանը, գոհերին, ատեցող հայրե-

նասիրությանը, վերոնց մեջն եր տեսնուած մարդկության
թշվառությունը:

Քրիստոսը ոժուամն շընդունեց և վոչ ել ձիթով ո-
ծեց իր առաքյալներին. նրա շնորհքը, ոժված, մաքրված
հոգին, Աստուծուն «Մարդու վորդու» մեջը քարոզեց:

Առաքյալներն ել իրենց հաջորդներին չոծեցին և
ոժուամն դարերով շկար քրիստոնեական յեկեղեցիների
մեջ գրեթե մինչև 9-րդ դարը:

Յերբ ձիթի ոժուամն մտալ յեկեղեցիներն մեջ, Ա-
վետարանի ավանդների վրա պինդ կանգնած հավատաց-
յալները բողոք քարձրացրին. ոժյալները նրանց «աղան-
դավոր» անարգական փառասիրտ տվին և սկսեցին հալա-
ծելու ջնջել նրանց և իրենց արարքը արդարացնելու հա-
մար մեկնողական ճառեր հյուսեցին թե՛ վորովհետև
փրկիչը Ս. հոգուց ե ծնվել, ոժման կարիք չուներ, ա-
ռաքյալներն ել ոժվելու կարիք չունելին, վորովհետև
Հիսուսից եյին ընդունուած Ս. Հոգի և հոգևոր ոժություն:

Աստվածաբանական այս շաղակրատության (յեթե
չասենք շառլատանության) դեմ կարելի ե առարկել այս-
պես. յեթե Ս. Հոգուց ծնվողը ոժման կարիք չի զգում,
ապա ուրեմն մեր ոժյալ փափերը, հայրապետները, յե-
պիսկոպոսները Ս. Հոգու ծնունդ չեն, այլ պիղծ հոգու
(սատանայի). յեթե Ս. Հոգու ոժումը Հիսուսից հաջոր-
դաբար անցալ առաքյալներին և նրանցից իրենց հաջորդ-
ներին, ուրեմն պետք ե հասներ մինչև այսորվա «առա-
ք' լական հաջորդներին». ինչպես ե վոր չի հասել և
ստիպված են ձիթի ոժումով Ս. Հոգի ստանալ:

Առաքյալները յերեցներ, հաջորդներ ընտրելիս՝ նը-
րանց գլխին միայն ձեռք եյին դնում որհնում, ինչպես
հրեական սովորո թյամբ ծերունի հայրն իր վորդուն եր
որհնում և հրավիրում եյին հետևել իրենց ներքին կոչ-
ման՝ Քրիստոս քորոզել. ուրիշ վոչինչ, վոչ ձիթի, վոչ
մածնի ոժումն կար:

Ավետարանի լավագույն գաղափարները տաճարակա-
նության և բռնապետության հիմերը քանդելու բանն ու

ըլուենգն են. յերբ բրիտոնեյությունը պետական կրոն ճանաչելու ստիպողական հարկի մեջն ընկան կայսրները՝ մի դիվական խաղ սարքեցին՝ հոգևոր դասի ձեռքով աղավաղել ավետարանի ուսմունքը և վերականգնել հրեյական տաճարականությունն իր բոլոր ձևերով ու ծեսերով, վորոնք ամրացնում են տիրող դասակարգերի դիրքը տնտեսապես, քաղաքականապես: Ուստի յեկեղեցին լըցրին ծեսերով Գրիստոսի անունով:

Վերականգնեցին ի միջի այլոց և մեռոնով ոծումը՝ ոծվում են թագավորները, քահանաները, վարդապետները, յեպիսկոպոսները, կաթողիկոսները, սեղանները, խաչերը, պատկերները և այլն, վորոնք՝ ըստ աստվածաբանների, աստվածային շնորհք ևն ընդունում, հրաշագործ դառնում, «սրբազան բնավորություն» ստանում, մեղսամած մարմինները մաքրում և ճանապարհ բանում մեր հոգու առաջ դեպի յերկնային լուսո հավիտենական խորանները...»:

Թե «մեղսամած մարմինները» ինչ աստիճանի սրբազան բնավորություն և հրաշագործ են դառնում ոծման շնորհիվ, այդ մասին կը խոսենք մի քիչ հետո, այժմ համառոտազրեքք թե յերբ և մտել հայոց յեկեղեցու մեջ մեռոնով ոծումը և մեռոնեփեքը:

Մեր աստվածաբանները գրում են. «Ս. Լուսավորչից սերնդդ սերունդ ժառանգած որհնությամբ՝ յեփվող մեռոնի կնիքն է, վոր մկրտության ավազանից վորոշում է յուրաքանչյուր հայ անձի կոչումը մարդկության մեջ»: Ասում են նույնպես, վոր Լուսավորչի յեփած մեռոնիցն է, վոր անընդհատ շարունակությամբ խառնում են նոր մեռոնի մեջ:

Այդ պնդումը կեղծիք է. Լուսավորչը վոչ մեռոն է յեփել և վոչ էլ ոծվել է. պատմության մեջ չկա այդ մասին և վոչ մի հիշատակություն: Մեռոնը հետին դարերու յեկեղեցու մեջ ամենամեծ սրբությունն է համարվել, վորի որհնության շուրջը հայ ուխտավորների աշխարհաժողով է յեղել: Յեթե նա գոյություն ունենար

Հուսավորչի ժամանակ, պատմիչները նրա մասին լուս-
թյուն չեյին պահի:

Յերկրորդ՝ Հուսավորիչը մի հրահանգ, մի հիշատա-
կարան կը թողնեք թե ինչպես պետք է մեռն յեփել,
ինչ նյութերից և այլն:

Մինչդեռ այդպիսի բան չկա. չկա նաև նրա հա-
ջորդների ժամանակ, գրերի գյուտից հետո: Մեռնին ար-
տակարգ նշանակութիւն տալու համար հետին դարերում
կեղծարար հոգեւորները նրա սկիզբը Հուսավորչի հմայիչ
անվան հետ են կապել, ինչպես վոր ընդունված սովորա-
կան կեղծարարությամբ շատ փծուն գրվածներ և կա-
նոններ կապել են ականավոր յեկեղեցական հայրերի ան-
վան հետ. այդպես ել յեկեղեցական կանոններ կան, վո-
րոնք Հուսավորչի անունով են թխվել:

Մեռնի և առհասարակ ոժման մասին հիշատակու-
թյուն կա Ը դարից, Ռհան Ոձնեցու անվան հետ կապ-
ված:

Սակայն այդ կեղծիքն ել կատարել են կաթոլիկ
կղերը, վորոնք ոժման շուրջը ձառ են գրել և Ոձնեցու
ձառերի շարքն են կոխել, ապացուցանելու համար թե
համբավավոր Ռհան Ոձնեցին ընդունում եր կաթոլիկա-
կան ոժումը:

Այդ կեղծիքը փայլուն հաջողությամբ մերկացրել է
Արիստակես յեպիսկոպոս Սեդրակյանը իր «Պատկերա-
հարգություն» լուրջ աշխատության մեջ:

10-րդ դարում Անձեացյաց ականավոր Սոսրով յե-
պիսկոպոսը նորամուտ և անմիտ բան է համարում խաչերի
ոժումը և ասում է՝ «Այն խաչը, վոր քահանաներն են
որհնում և այն, վոր չհն որհնում միապատիվ են և որհ
ները ավելորդ եմ համարում»: Իհարկե Անանիա կաթու-
ղիկոսը բանադրում է ճշմարտախոս յեպիսկոպոսին («Ա-
րարատ» 1897 թ.):

Եջմիածնի ձեռագրատանը կա ձեռագիր «Մայր
Մաշտոց» 29 հատ., «Առձեռն Մաշտոց», 29: Նրանցից ա-
մենահինը 13-րդ դարու յե (1296 թ.): Այդ «Մաշտոց»-

ների մեջ յեկեղեցիների որհնու թյաւն կանոններ կան. պատկերների որհնության կանոններ կան միայն 17-րդ դարու կեսին գրված մաշտոցներում: Այդ որհնության կանոններն եւ մաշտոցների մեծ մասի մեջ ամենեին չկան, այդ որհնությունների մեջ մեռնով ոճելու մասին միայն մեկուժը կա, վոր 1763 թ. ե կրում («Պատկերահարգություն»):

Պարզ ե, վոր իրերի ոճումը նոր ե, շինծու, վոչ ֆրիստոսի հետ կապ ունի և վոչ եւ Լուսավորչի:

Այս ճշմարտությունը շեշտող մի ուրիշ փաստ եւ կա: Ըստ «Մեռնորհնության Մաշտոցի» ձիթի մեջ իրանում են 38 (նոր ցուցակով 48) տեսակ անուշահոտ ծաղիկների և խնկեղենի հյութեր: Իրանց անուշաների մեծ մասը արաբական, տաճկական ծագում ունին, անուշաներ, վորոնք Լուսավորչի և նրան մերձ դարերում շեյին կարող լինել. որինակ՝ սմպուլ, խալանաբուլ, բապապի, զնջփիլ, միահտահիլե, դաֆրան, մահլապ և այլն:

Անձերի ոճումը սկսվում ե հայոց մեջ առաջին անգամ Բագրատունյաց ժամանակ 9-րդ դարում («Հայոց յեկեղեցու իրավունքը» Ներս. յեպ. Մելիք-Թանգյան):

Բաց ենք թողնում մեռնի որհնության շուրջը կատարվող ծեսերի, ձևերի և արարողությունների նկարագրությունը և ոգտվելով մեր ժամանակի՝ և միակ ժամանակի, կրոնական ազատությունից, խեղդվող ճշմարտությունը խեղդողների ձեռքից ազատելու համար դենք այս հարցերը՝

1. Մեռնով ոճվող «սրբազան» անձնավորությունները Ս. Հոգու շնորհքով լցվում, սրբանում, աստվածային են դառնում թե վոչ:

Յեթե տգետներին մոլորեցնող այս աստվածաբանական հերյուրանքները ճիշտ լինեյին, մկրտության ժամանակ մեռնով ոճվող մեր մանուկները կը մեծանային, անարատ, անբիծ, մարդկային չարությունից ու ախտերից ազատ և մենք աստվածային կատարելություններով լի մի ժողովուրդ կունենայինք: Այդպիսին ե մեր ոճյալ ժողովուրդը:

Քահանաներն ոծվում են, վարդապետներն ոծվում են յերկու անգամ, յեպիսկոպոսները՝ 3 անգամ, կաթողիկոսները՝ 4 անգամ: Ուրեմն սրանք բալորն ել մեռնի շնորհած ս. հոգու շնորհիվ անթերի, կատարյալ մարդ— աստվածիկներ և աստվածներ պետք ե լինեյին և հիմար կը լինեյին այն վոչբրիսաոնյա ազգերը, վոր չվագեյին ու չգային կաթողիկական և հայկական մեռնի ոծումն ընդունելու:

Սակայն բոլորովին հակառակն ենք տեսնում. Դանտեյի նկարագրած դժոխքումն են այս բոլոր ոծյալները շատ աննշան բացառությամբ, վորոնք յեթե ոծյալ չլինեյին իրենց մարդկային բարեսրտությամբ և բարձր իմացականությամբ կյանքի մեջ ավելի պիտանի և լավ կը լինեյին: Հանճարեղ Բոկկաչիոյի «Դեկամերոնի» մեջ ոծյալ-վանականների գարշահոտ փտությունն ե պատկերավորված, իսկ հայոց յեկեղեցու արդի բարձր հոգեվորականության սև ու մութ գործերը հրապարակի վրայ են, վորոնցից գիտակից մարդու սիրտն ե խառնում, գլուխն ե շշմում:

2. Մեռնեփեքը և հոգևորների ոծումը բարիք ե բերել հայ ժողովրդին թե չարիք:

Բարիքը չենք տեսնում, չարիքն ակնհերև ե:

Մեռնեփեքը և նրա շուրջը խմբված շլացուցիչ հանդեսները միամիտ ժողովրդին շարաշար շահագործելու մի միջոց են հոգուտ ոծյալների. յերեխան մեռնվեց՝ փող տուր, քահանան ոծվեց՝ փող տուր, վարդապետը, յեպիսկոպոսը, կաթողիկոսը ոծվեցին՝ փող տուր, վորովհետև քեզ համար են ոծվել, հայ ժողովուրդ, վոր քեզ առաջնորդեն «յերկնային կայաններն»: Փամերն ոծեցինք փող տուր, խաչերն ու պատկերներն ոծեցինք փող տուր, մեր ձեռքերն ոծված են, յեկ համբուրի, բայց ձրի չե, փող տուր, արի քեզ որհնեմ՝ փող տուր թե չե կանիծեմ փորձանքի կը հանդիպես, ցանքի սերմը բեր որհնեմ՝ վոր բուսնի, կարկուտը չջարդի, մուկը չտանի՝ փող տուր, մատաղի աղ բեր որհնեմ՝ վոր մատաղն աստ-

ծու մոտ ընդունելի լինի՝ մատաղի իրեն, փոստը, սիրտ
ու թորը տուր: Տո՛ւր, տո՛ւր, տո՛ւր... վորովհետև յես «Ո-
ծյալ Տյառն» եմ, Ս. Հոգու շնորհքն ե իջած ինձ վրա:
Մենք ոծյալ ենք, Ս. Հոգու շնորհիվ փոխել ենք Ավետա-
րանի խոսքը՝ «Ձրի առեք և ձրի տվեք» և դարձրել ենք՝
«Փողով ենք առնում մեռոնի ոծուվը և տոկոսով ենք
տալիս»:

Ահա տնտեսական այն չարիքը, վորի մեջ տապակ-
վում ե հայ ժողովուրդը մեռոնի ոծումների շնորհիվ:

Իսկ մեռոնեփեքին հայ ժողովուրդը թափվում ե եջ
միածին ինչպես վոչխարն աղի վրա և տալիս ե ինչ վոր ունի
և՛ ինչ վոր չունի ու փոխ ե առնում, վոր տա: Յեվ կու-
տակվում ե Ոծյալների գանձարանում մի հսկայական
գումար, վոր բավական կը լինի նրանց վայելչություննե-
րի. խնջույքների, թղթախաղի համար մինչև մյուս մե-
ռոնեփեքը:

Իսկ այս բոլոր «տո՛ւր, տո՛ւր»-ի փոխարեն ի՞նչ ե
տանում հայ հավատացյալը վերադարձին՝ աղքատություն,
հիվանդություն, վարք ու բարքի թուամած ծաղիկ, վորոն-
ցով վոչ մի «յերկնային կայան» չես մտնի, յերկրային
կայաններումն ել թշվառ կը լինես ու մտքով կույր:

Ոծյալ հոգևորները մեռոնի շնորհիվ «սրբազան բնույթ»
են ստանում, Աստծուն մոտ կանգնում, նրանք պատկա-
ռելի յեն, հարգական, ուստի նրանք վեր պիտի մնան
ժողովրդի դատապարտությունից իրենց չար արարքների
համար: Յեվ յեկեղեցական որենքները՝ ի վնաս ժողո-
վրդի բարոյականի և տնտեսության, այս կողմից ել ս-
պահովում են ոծյալներին և նրանց անսանձ արշավողներ
դարձնում:

«Վոչ վոք շանարզի, շանգոսնի և շարհամարհի քա-
հանային, մինչև անգամ յեթե նա անարժան և անարգ-
վածներից մեկն ել լինի» (Առաքելական կանոնների 29. բղը.
թեև խեղճ առաքյալների մտքովն ել չի անցել այդ-
պիսի բան): Ինչո՞ւ, վորովհետև ոծյալ ե:

«Չորեքշաբթի և ուրբաթ միս ուտողը մի շաբաթ

պաս պահի, յեթե վկայեն, վոր չի պահել, գլուղի տանուտերը նրա յեզն առնի, տա տերտերին»։ («Աղվանից ժողովի կանոն 13»)։ Ինչո՞ւ տերտերին, վորովհետև «ո՞ճյալ ե»։

Այսպիսի մարգարիտների կողքին յեկեղեցական ժողովական կանոններից կարելի յե շարել և ուրիշները, վորոնց մեջ իշխանազուհներն ու ոճյալները միևնույն հանցագործության համար թեթև պատիժներ են կրում, միջդեռ հավատացյալները դատան պատիժների յեն յեւթարկվում։

Մեռոնի և ոճյալ հոգևորների շուրջը ստեղծվում, հյուսվում են հրաշքներ, առասպելական ավանդություններ. Գրիգոր Նարեկացու առջևը մի սինի փլավ դրին, վրան ել 2 տապակած աղամլի։ Նարեկացին չկամեցավ անմեզ մորթված թռչունների միսն ուտել. «Թո՛ւք, որհնյալներ, թո՛ւք, գնացե՛ք» և տապակած աղամլիները թեւաժափ տվին ու թռան։

Պետրոս Գետադարձ կաթուղիկոսը (Անին հույներին վաճառող դավաճանը) Տրապիզոնում վասիլ կայսեր ներկայությամբ խաչը շուրջը քցեց գետում և հայոց լույս մեռոնի շնորհիվ գետի հոսանքը կանգ առավ, գետը հետդարձավ և Պետրոսը մնաց վորպես հրաշագործ «Պետրոս Գետադարձ»։

Այս և նման հրաշքները նպատակով են ստեղծվում ոճյալների շուրջը հմայք, աստվածային դիրք են տալիս ոճյալներին, ամրացնում դասակարգային ուժը և թանձրանում խավարը հմայված հավատացյալների մըտքի վրա և հոգեպիս թե տնտեսապես ստրկացնում նրան։

Մեռոնեփեքի ծիսից և ոճյալների յեսապաշտությունից բղխում ե և մի ուրիշ շարիք, վոր մղձավանջի նման դարերով ե խեղդում հայ ժողովրդին և որեցոր կըրճատում նրա թիվը։

Այդ դեպքի ոտար աղգերն ու ոտարադավանները տաժած աստելությունն ե, վորի հետևանքով ոտարների

ատելութիւնն ել իբրև տապանաբար հայ ժողովրդի վրայ քաշվում:

«Եջմիածինը թագուհիների միակ թագուհին է, Քրիստոսի հատուկ սիրելին, վորի նմանը ուրիշ ազգերը չունեն, վորին յերանի են տալիս ու գովում, վորին կարոտում են, տեսնել ցանկանում. նա յե վոր կենդանաբար ջուր՝ ս. մեռոն է տալիս ձեզ, վոր աստվածային լույս է ձեր հոգու և մարմնի համար, վոր ձեզ առաջնորդում է դեպի յերկնային կայանները...»

Մեծ ոծյալի այս մեծ բանդագուշանքից հրեյական մեծամտութիւնն է բուրում և ոտարատեցութիւն. Յեհովայի հոգեվոր ոծյալներն եյին քարոզում թե Ասածու միակ ընտրյալ ազգը, միակ սիրելին հրեյից ազգն է, մյուս ազգերը խորթ են, անսուրբ, վորոնցից պետք է գարշել: Այս շարաթուլն մեծամտութիւնն էր, վոր ծաղրեց և հանդիմանեց Քրիստոսը:

Այս հոգով կազմված են նաև մի շարք յեկեղեցական որենքներ. «Վոչ վոք շհամարձակվի հեթանոսի հետ ամուսնանալ, վորովհետև անհավատի հետ ամուսնանալը շնութիւնից ծանր է» (Պարտավի ժողով 115.).

«Ով կը սիրի հրեյային և հեթանոսին և հաղորդակցութիւն կունենա նրանց հետ, թող յեկեղեցի չմտնի» «ով յեկեղեցուց մերժվածի հետ կաղոթի, թեկուզ տանը, նա ել նույն պատժին կյենթարկվի» (Առաքել. կանոններ 6, 9):

«Ով վոր աղանդավորների մեջը գտնվի ջիւերը կարրտեն, ուրկանոց տանեն» (Շահապիվանի ժողովի կանոն 19):

Յեվ այս ու նման մի շարք կանոններ հայ ոծյալները գրել են Հիսուսի և առաքյալների անունով, վորոնք բոլոր մարդկանց մեջ յեղբայրութիւն ու սեր եյին քարոզում: Յեվ այս ատելաշունչ խտրողականութեան հիմքը «ս. մեռոնն է»:

Ոծյալների այս վոգին պես-պես գուշներով խտացել է կրոնական առասպելների մեջ, վորոնք շեշտում են

թե ոտարը՝ թուրքը, քուրդը «մուռտառ են», նրանց հացն ու մորթվածքը «մուռտառ», նրանք չեն մեռնում այլ «սատ կում են», նրանք «գոռից» (գերեզմանից) դուրս են գալիս «գոռնափշտիկ» դառնում՝ շան — կատվի կերպարանքով, վորովհետև նրանց յերեսը մեռնոն չի քսված, նրանց գերեզմանի վրա «տիրոջ ոծյալ քահանան» աղոթք չի կարդացել, վոր հանգիստ հանգչեն:

Ահա այս և նման ատելաշունչ ըմբռնումներն են, վոր հիմք են դարձել ոտարների համար փոխադարձ և ուժգին ատելությամբ վերաբերվելու հայ ժողովրդին և նպաստավոր պայմաններում նրան թալանելու, հըրդեհելու, կոտորելու:

Ահա այս է ոծյալների չարիքներից մեկն էլ:

* * *

Մեր որերը յերկար ու ձիգ կրոնական միապաղաղ ըմբռնումների և ապրումների որեր չեն. ժողովրդական անորինակ մեծ հեղափոխության թափը բաղխեց ժողովուրդների թմրած միտքը, ցնցեց նրան և հին ըմբռնումներն ու ապրումներն իրենց հունից հանելով՝ նոր ուղղության, նոր հունի մեջ դրեց: Հանդես յեկավ նոր քաղաքականություն, տնտեսագիտական և կրոնական նոր աշխարհայացք: Հին ըմբռնումներն ու ապրումները վերաքննելու և վերագնահատելու կարիք զգացվեց: Ի միջի այլոց յեկեղեցին պետությունից անջատ և կրոնա-ազատ հայտարարվեց: Մարդկանց կրոնական զգացմունքներն ու խիղճը ազատվեցին աշխարհիկ և հոգևոր ոծյալների բռնությունից, վորի հետևանքով հավատացյալներն սկսեցին վերաքննել իրենց կրոնական ըմբռնումները, իրենց յեկեղեցին և մերժել այն ամենը, ինչ վոր բռնադրոսիկ էր, ինչ վոր ուժով փաթաթված է յեկեղեցու և հավատացյալների վզին ոծյալ ցարերի և հովվապետների ձեռքով:

Հին կրոնական ըմբռնումները քննադատողների միտքը սարգապես տեսավ, վոր Քրիստոսի անունով կառուցված յեկեղեցին և նրա անունով գործող հոգեվոր

ոծյալների դասը մարդկային առողջ բանականության, բարոյական գաղափարներին և նույնիսկ Ավետարանի գաղափարներին տրամագծորեն հակառակ գծով են անցել՝ շահագործել են միամիտներին, գուլիել-Չուլիել են, խափել են, կեղծել այն նպատակով միայն, վոր իրենց դասակարգային դիրքն տմբանա, ժողովուրդը կույր ժրնա և հլու հնազանդ, աշխատի և պորտաբուծների պորտերը պարարի հանուն Աստծո: Յեւ այս նպատակին հասնելու համար հզոր զենքը նրանք ծեսերի, ոծյալների և հրաշալի առասպելների մեջն են տեսել

Հառաջադիմականների վերաքննությունները նրանց բերին այն անհերքելի համոզմանը, թե յեկեղեցին շարաշար աղափաղել է Ավետարանը, Քրիստոսի անձև, անծես գործնական ուսմունքը և բարքերի ապականության մշտահոս աղբյուր դարձել և յեկան այն յեղրակացության, թե պետք է բարեփոխել յեկեղեցին:

Հանկարծակի յեկած ոծյալների վերին խավը սարսասափահար չեղավ, «բարեփոխել» խոսքից և իր թագավորությունը տգետ մասսայի մեջ ամրացնելու համար և իր դիրքերն ու անաշխատ ապրուստն ապահովելու համար հավաքեց իր ուժերը և կրոնական հանդեսների, հրաշալի առասպելների, խավարամիտ քարոզների մի նոր ցիկլ ստեղծեց: Այժմյան մեռնեփեքն այդ նպատակին ծառակեցնելու համար է կազմակերպված:

Սակայն այդ նոր յելույթը ջրասույզի, հոգեվարք հիվանդի հետին ճիգերն են:

Վոչ միայն աշխարհիկ հավատացյալներից շատերը, վոչ միայն հոգևորների միջին և ստորին, այլ և վերին ոծյալ խավերից հրապարակ են յեկել ժարգիկ, վորոնք ոծյալների կեղծիքը, խաբեյություններն են բղկտում և ծեսերն ու հրաշքերն են ձաղկում:

«Բայց անկեղծ ըլլալու համար պետք է ձեռքներս խղճերնուս վրա դրած ըսենք, վոր շատ անգամ կրոնականք իրենց ընթացած կրոնի շահերուն և հաշիվներուն համար Ավետարանը և անոր լիսեմ բարոյականը զոհած

են: Բարոյականի տկարացում այսոր ծիսակատարութիան մեծապես ուժ տրված ըլլալուն հետևանքն ե... խճողված ծեսն ու արորողութիւնը կը խեղդեն կրօնի հոգին... վորքան ալ գեղեցիկ յեկեղեցիներ և սիրուն բնակարաններ ունենանք, անոնք նման պիտի ըլլան մարմարյա գերեզմաններու, վորոնց տակ մեռելներու վոսկորտիքներ և նեխութիւններ միայն կան... մարդասեր յեղեք, յեթե վոչ ձեր աղոթքները, ձեր յերգերը, ձեր պատարագները կատակերգութիւններ պիտի նկատվեն...» «Հրաշքներու վրա հիմնված կրօն մը յերբեք աստվածային և տեվական չկրնար ըլլալ: Հրաշքներ, նշաններ յերբեք Աստծու գոյութիւնն ապացուցելու չեն նպաստեր»:

Այս մեջբերումները քաղված են անվանի Ղեվոնդ յեպիսկոպոս Դուրյանի «Պարզ քարոզներից» և այս արտահայտութիւններն իր հավանութեամբ գրքի սկզբում վավերացրել ե իր մի նամակով Յերուսաղեմի այժմյան պատրիարք հռչակավոր Դուրյան Յեղիշե սրբյեպիսկոպոսը:

Բայց ավելի իստոր, ծաղրականը, ինքնամտրակուժը կա. Եջմիածնի գերխորհրդական «Պեսսիմիստ Գյուլտ յեպիսկոպոսը (այսպես ե անվանում իրեն) Փարիզում տպված իր նոր գրքում՝ «Հայ յեկեղեցու բարենորոգութեան խնդիրը և ազգային յեկեղեցական ժողովը», այսպես ե արտահայտվում հայ հավատացյալների և հայ հոգևորականութեան մասին. միջնադարյան ըմբռնութիւն Աստծու, բնութեան, մարդու, սրանց ստեղծագործութեան մասին այլևս անընդունելի յեն. դրախտ, դժոխք, սատանա, հրեշտակ չկան. միջնադարյան դավանական ընթացումների վրա կանգնել այլևս չի կարելի: Հայ ունորը, մտավորականն անհավատ են, միայն արտաքին ձևերով են կապված յեկեղեցու հետ, հայ քաղքենին՝ մեշանները «ճահիճ են», հայ հավատացյալ մասսան ել քրիստոնյա չե, այլ կապված ե հեթանոսական ծեսերի հետ, հայ առաջնորդն ել այնուամենայնիւ, անգամ 20-րդ դարում չի վարանում նրան նույնքան սնտիա-

պաշտ, թուխ ու այլ գույնի Մանուկների Ավետարանի
յերկրպագող քահանաներ տալ, վերջիններից բավական
խոշոր գումարներ, կով ու յուղ ստանալով»

Այդ գիրքը տպագրությունից առաջ կարդացվել է
Գերագույն Խորհրդի բոլոր անդամների, Եջմիածնի բոլոր
վանականների ժողովում և նրա սանկցիան է ստացել:

Իսկ այժմ նույն գերխորհրդական կազմը, նույն հե-
ղինակով հանդերձ հրավիրում են «անհավատ» «ծիսա-
պաշտ» «սնահավատ» «ճահիճ» հայ հավատացյալներին,
«թուխ մանուկներ» պաշտող կաշառատու տգետ քահա-
նաներին, վոր գնան Եջմիածին մեռոնի ծեսերին ուխտի,
«կաշառատու» առաջնորդների ընթերցվածները լսեն դը-
րախտի, դժոխքի, հրեշտակների, սատանաների մասին և
հոգևոր ներկայացումներին ներկա լինեն ու փող տան:

Այս ծաղր է, կատակերգություն, փարիսեցիական
խաղ:


Յեվ այդ «ճահիճ», «ծիսապաշտ» «հեթանոսական
սնահավատությունների «գերի հավատացյալները պետք
է վազեն Եջմիածին «կաշառատու» առաջնորդների ձեռ-
քերով պատրաստված մեռոնն ընդունելու, վորպես մեծ
սրբություն, պետք է գնան ձեռնադրվող Արիստակես
յեպիսկոպոսի ոժվող աջը համբուրելու, վորի համար 23
թվականին Յերևանի «անհավատ»-հավատացյալ մտա-
վորականները բազմաստորագիր բողոք ելին ուղարկել
կաթոլիկոսին թե՛ վեհափառ, վանքիցը դուրս արա այդ
արվամուլ շանը (Ավանգարդ 1923 թ.), պետք է գնան
համբուրելու «Մուկղենի հերոս», ուսական և ճապոնա-
կան թերթերի մեջ անարգված իր վատշվեր կյանքի հա-
մար Ռուբեն նորած յեպիսկոպոսի աջը, մարդիկ վո-
րոնց մերձեցումն իսկ մեռոնին պետք է կեղտոտի մե-
ռոնի ձեթը: (Խարբինում հրատարակվող «Трибуна» լրա-
գիր 1924 թ. № 46 ուղարկված է կաթոլիկոսին):


Խելքի յեկեք հայ հավատացյալներ, մարդու յեր-
ջանկության հնարավորություններն իր մեջն են, այլ
վոչ ոժումների և ծեսերի, քննադատական հոգի արծար

ժեցեք ձեր մեջ դուրս յեկեք հողևոր ծեսերի հմայքը
 դրանք վոչ միայն հակառակ են առողջ բանականության,
 գիտության, այլ նույնիսկ հակառակ են ձեր պաշտա
 Ավետարանի պարզ, բարոյագիտական խրատներին
 միայն խաբկանք են ոժյալների ձեռքում, ինչպես կար
 թի ծայրին ամրացրած ճիճուն ձկնորսի ձեռքում, ձու
 վորսալու համար:

1144
 50







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220036265

A $\frac{11}{36265}$